ԳԼՈՒԽ Ը.

ՏՐԱՊԻԶՈՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

Տարակարծութեան միւս լուրջ աղբիւրը պատերազմի և խաղաղութեան հարցն էր, որը, ինչպէս արդէն բազմիցս նկատեցինք, անդրկովկասեան ժողովուրդներին բաժանել էր տարբեր, յաճախ, միմեանց թշնամի հատուածների: Այս հարցում կովկասեան ժողովուրդների տեսակէտը բաւական տարբեր էր իրարից. վրացիք և, մանաւանդ, հայերը ձգտում էին «պատուաւոր հաշտութեան»: «Այնպիսի հաշտութեան, որպիսին ստորագրեցին բոլշեւիկները, մենք չե՛նք ստորագրի. աւելի լաւ է պատուով մեռնել դիրքերում, քան թէ խայտառակւել և սերունդների անէծքին մատնւել»,—Ն. Ժորդանիայի այս յայտարարութիւնը ընդունեց բուռն ծափերով Սէյմի կողմից, փետր. 15-ի նիստում:

Նոյնքան և աւելի վճռական էին հայերը: Սէյմի նոյն նիստում Ց. Քաջազնունին Հ. Ց. Դաշնակցութեան ֆրակցիայի անունից յայտարարեց. «Դաշնակցութիւնը հերթից դուրս դնում է պատերազմը վերջացնելու և Ռուսաստանի յեղափոխական դեմոկրատիայի ազդարարած սկզբունքներով հաշտութիւն կնքելու հարցը — հաշտութիւն առանց բռնագրաւումի և ռազմատուգանքի՝ ժողովուրդների ինքնորոշման հիմունքով: Մեր ճակատում այս սկզբունքը պէտք է յանդի Թիւրքահայաստանի ինքնավարութեան ստեղծման»: Այսպիսով, հայկական տեսակէտը անհամեմատ աւելի որոշ էր, քան վրացիների անորոշանդակ «պատուաւոր հաշտութիւն» խօսքը:

Աւելի կտրուկ էր ազրբէջանցիների բանաձևը. նրանք պահանջում էին անմիջապէս վերջ տալ պատերազմին, բաւականանալ 1914 թւի սահմաններով և չխառնւել Թիւրքիայի ներքին գործերին. թրքահայկական խնդիրը, նրանց համար, Թիւրքիայի ներքին գործ էր:

Ազրբէջանցիների կողմից յայտարարութիւն անող Աղայևը դեռ վարանոտ ու չափազանց զգոյշ արտայայտութիւններով էր ձևակերպում այս տեսակէտը. «Խիստ կերպով անցկացնել հարեւան պետութիւնների ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը»: Բայց հետզհետէ լեզուները բացւեցին, և Ազրբէջանի գործիչներն այլևս պէտք չէին զգում ծածկելու, որ իրենց համար «եղբայրական Թիւրքիայի» շահերը աւելի թանդ են, քան իրենց հարևան հայերի ազգային բաղձանքները:

Ցաջորդ նիստում, փետր. 16-ին, Սէյմը արդէն գործնականօրէն զբաղւեց հաշտութեան խնդրով: Ցանձնախմբի զեկուցաբեր Ն. Ռամիշվիլին